Գ. ՄԱԼԵՆԿՈՎ

ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ



31 JAN 2018

Գ. ՄԱԼԵՆԿՈՎ

Համկ(բ)կ XVIII համագումարի մանդատային հանձնաժողովի զեկուցումը

1939 թ. մարտի 12

ԳԵՏՀՐԱՏ
ԴԱՂԱՓԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՍԵՐԲԵՎԱՆ ● 1939

1/3

Г. МАЛЕНКОВ

ДОКЛАД МАНДАТНОЙ КОМИССИИ XVIII СЪЕЗДА ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Հայաստանի ԱԶԳԱՅԻՆ գրադարան
ՀԱՄԱՐ
II-28681գ

Հայերեն թարգմանության խմբագիր Ա. Հակոբյան
Տեխն. խմբագիր Հ. Մանվելյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Դլավլիտի լիցեզիա № Ն—2847, հրատ. № 693
Պատվեր № 89, տիրաժ 5000
Թղթի չափը 84×110 1/32 (29.920 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 1 տպ. մամուլ 1/2 թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 11/V 1939 թ.
Ստորագրվել է տպագրության 29/V 1939 թ.
Գինը 15 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչություն,
Երևան, Ալլահվերդյան № 65

Ընկերնե՛ր, Մանդատային հանձնաժողովն ինձ հանձնարարել է համագումարին զեկուցել հանձնաժողովի աշխատանքի արդյունքները:

Ինչպես հայտնի է, համագումարի զեկուցողների ընտրությունները կատարվել են մարզային կուսակցական կոնֆերենցիաներում, իսկ այն յերկրամասերում և մյութենական հանրապետություններում, վորտեղ չկա մարզային բաժանում՝ յերկրամասային կուսակցական կոնֆերենցիաներում և ազգային-կոմունիստական կուսակցությունների համագումարներում:

Մանդատային հանձնաժողովն ստուգեց Համկ(բ)կ XVIII համագումարի համար ընտրված զեկուցողներից յուրաքանչյուրի լիազորությունները: Այդ ստուգման հետևանքով հանձնաժողովը գտավ, վոր առանց բացառության բոլոր կուսակցական կազմակերպություններում ընտրությունները ճիշտ են կատարվել: Ամենուրեք պահպանվել են ներկայացուցչության այն նորմաները, վոր Կենտրոնական Կոմիտեն սահմանել եր կուսակցության համագումարի ընտրությունների համար, այսինքն, մեկ զեկուցող վճռողական ձայնով՝ կուսակցության յուրաքանչյուր մեկ հազար անդամից և մեկ զեկուցող խորհրդակցական ձայնով՝ կուսակցության անդամության յուրաքանչյուր յերկու հազար թեկնածուից: Բոլոր կուսակցական կազմակերպություններում Համ. Կ(բ)Կ XVIII համագումարի զեկուցողների ընտրությունները կատարվել են գաղտնի քվեարկությամբ: Համագումարի համար ընտրված բոլոր զեկուցողները կուսակցական կոնֆերենցիաներում և համագումարներում քվեարկվելու ընթացքում ստացել են ձայների անհրաժեշտ մեծամասնություն:

Մանդատային հանձնաժողովը հարկավոր է համարում նշել, վոր բոլոր կուսակցական կոնֆերենցիաներում կուսակցության XVIII համագումարի դելեգատների ընտրությունները անցել են բոլոր կուսակցական կազմակերպությունների, բոլոր կոմունիստների՝ կուսակցության դլխավոր գծին անսահմանորեն նվիրված լինելու նշանաբանով: (Աղմբկալի, յերկարատև ծափահարություններ):

Ընտրությունները ցույց տվին կուսակցական շարքերի բացառիկ միասնությունը, կուսակցության համախմբվածությունը Լենինյան-Ստալինյան Կենտրոնական Կոմիտեյի շուրջը, կուսակցության և ժողովուրդների առաջնորդ ընկ. Ստալինի շուրջը: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, համագումարը ջերմ ովացիա յե սարքում ընկեր Ստալինի հասցեյին):

XVIII համագումարի համար ընդամենը ընտրված է 1·574 դելեգատ վճռողական ձայնի իրավունքով: Համագումարին ներկա յե 1·569 դելեգատ վճռողական ձայնի իրավունքով: Հարգելի պատճառներով, ինչպես այդ հաստատեց Մանդատային հանձնաժողովը, կուսակցության համագումար չեն յեկել հինգ դելեգատ: Կուսակցության համագումարում ներկա յեն խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող 466 դելեգատներ:

Կուսակցության համագումարում առավել խոշոր դելեգացիաներ հանդիսանում են՝ Մոսկվայի դելեգացիան, վորի կազմի մեջ 208 հոգի վճռողական ձայնի իրավունք ունեցողներ են, վոր կազմում է կուսակցության համագումարի վճռողական ձայնի իրավունք ունեցող դելեգատների ընդհանուր քանակի 13,3%-ը. Լենինգրադինը—143 դելեգատ, կամ 9,1%-ը, Աղրբեջանականը—42 դելեգատ, Ստալինսկինը—42, Ռոստովինը—38, Կիևինը—37, Վրացականը—37, Իվանովոյինը—37, Խարկովինը—36, Գորկունը—36, Կրասնոդարինը—29, Դնեպրոպետրովսկինը—27, Վորոնեժինը—26, Ստալինգրադինը—26, Յարոսլավլինը—26, Կալինինինը—25, Կույբիշևինը—25, Սվերդլովսկինը—25, Վորոշիլովգրադինը—25, Որյոլինը—23, Նովոսիբիրսկինը—22, Պրիմորյեյինը—22, Խաբարովսկինը—21, Չելյաբինսկինը—20, Սարատովինը—20:

Վճռողական ձայնի իրավունք ունեցող դելեգատների ընդհանուր քանակը Ուկրաինայի բոլոր մարզային կուսակազմակերպություններից՝ կազմում է 272 մարդ, Զաղավոստոկի բոլոր մարզային կուսակազմակերպություններից—38, Բելոռուսիայի բոլոր մարզային կուսակազմակերպություններից—37, Ուզբեկստանի բոլոր մարզային կուսակազմակերպություններից—22:

Գեռ է նշել, վոր մի քանի կուսակցական կազմակերպություններ վճռողական ձայնի իրավունքով դելեգատներ կարող եյին ունենալ մի քիչ ավելի մեծ թվով, յեթե այդ կազմակերպությունների ղեկավար կուսակցական որդաններն իրենց ամենորյա աշխատանքում ավելի շատ ուշադրություն հատկացնեին՝ թեկնածուությունից իր ժամանակին կուսակցության անդամ փոխադրելու հարցին: (Ընդհանուր աշխուժություն դահլիճում):

Որինակ, Խարկովի կուսակցական կազմակերպության մեջ հաշվվում է կուսակցության անդամության ավելի քան վեց հազար թեկնածու, վորոնք ժամկետանց թեկնածուական ստաժ ունեն: Կամ ահա Վորոնեժի կուսակցական կազմակերպությունը,—նրանում կա մոտավորապես կուսակցության ութ ու կես հազար թեկնածու, վորոնք ղրալի ժամկետանց թեկնածուական ստաժ ունեն: Կարելի յե մի ամբողջ շարք այդպիսի կուսակցական կազմակերպություններ թվել:

Կուսակցության թեկնածուությունից անդամ փոխադրելու անբավարար աշխատանքի հետևանքով կուսակցության թեկնածուներից տասնյակ-հազարավոր ակտիվ, առաջավոր մարդիկ զրկվել են կուսակցության համագումարի ընտրություններին վորպես անդամ մասնակցելու հնարավորությունից: Ըստ յերևույթին, ընկերներ, անհրաժեշտ է հետագայում ավելի լուրջ ուշադրություն նվիրել իր ժամանակին կուսակցության թեկնածուությունից անդամ փոխադրելու խնդրին:

Մի քանի խոսք ներկա համագումարում ներկայացված՝ կուսակցության անդամների և թեկնածուների քանակական կազմի մասին:

Մինչև XVIII համագումարը, ավելի ճիշտ՝ առ 1-ը մար-

տի 1939 թ., կուսակցությունն ունի 1·588·852 անդամ և 888·814 թեկնածու:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ այս տվյալները հիմնված են կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի անձնական խստիվ հաշվառման վրա: Կենտրոնական Կոմիտեն այդ հաշվառումը մտցրեց արդեն կուսակցության XVII համագումարից հետո, 1936 թվին: Այդ հաշվառման տվյալները յուրաքանչյուր ամիս ստուգվում են կուսակցության շրջանային, քաղաքային, մարզային կոմիտեների հաշվետվությամբ Համ(ր)Կ Կենտկոմի առաջ:

Համագումարում ներկայացված են բոլոր մարզերի, յերկրամասերի, միութենական և ավտոնոմ հանրապետությունների կուսակցական կազմակերպությունները: Կուսակցության XVIII համագումարի դելեգատների ընտրություններին մասնակցել են XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում նոր ստեղծված բոլոր մարզային, քաղաքային և գործարանային կուսակցական կազմակերպությունների կոմունիստները:

Ընդարձակվել է կուսակցության ներկա XVIII համագումարում ներկայացված կուսակցական կազմակերպությունների ցանցը:

Կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, ադմինիստրատիվ–տերիտորիալ կազմակերպությունների վոքրացման հետևանքով, մեծացել է մարզային կուսակցական կազմակերպությունների թիվը: Հենց այդ ժամանակամիջոցում էլ ստեղծվել են 80 քաղաքային կուսակցական կազմակերպություններ և 1·256 շրջանային կուսակցական կազմակերպություններ: Կուսակցության XVII համագումարից հետո սկզբնական կուսակցական կազմակերպությունների քանակն ավելացել է 2·255-ով:

Ստեղծվել են կուսակցական կազմակերպություններ այնպիսի խոշորագույն կառուցումներում, ինչպես Մոսկվայի մետրոպոլիտենը, վորտեղ մենք ունենք ավելի քան 1·700 կոմունիստ, Ուրալմաշզավոդի կուսակցական կազմակերպությունը—1·343 կոմունիստ, Շարիկոսդշիպնիկի կուսակցական կազմակերպությունը—1·262 կոմունիստ:

Կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում ստեղծվել են չստ մեծ քանակությամբ կուսակցական կազմակերպություններ նոր գործարաններում, նոր խորհտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում:

Ընկերնե՛ր, ավելի մանրամասն կանգ կառնեմ համագումարի՝ վճռողական ձայնի իրավունք ունեցող դելեգատների կազմի բնութագրման վրա:

Համագումարի դելեգատների կազմի մեջ մենք ունենք կուսակցական աշխատողներ, արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության, կոոպերացիայի, առևտրի աշխատողներ, կուլտուրայի աշխատողներ, սոցիալիստական տնտեսության բոլոր ճյուղերի աշխատողներ:

Համագումարում ներկա յեն կուսակցական որդանների 659 աշխատողներ, կոմյերիտական որդանների 27 աշխատողներ, Կարմիր Բանակի, Ռազմա-Ծովային Նավատորմի և ՆԳԺԿ-ի 283 աշխատողներ, արդյունաբերության 230 աշխատողներ, խորհրդային-ադմինիստրատիվ որդանների և պրոֆմիությունների 162 աշխատողներ, յերկաթուղային, ջրային և ոդային տրանսպորտի 110 աշխատողներ, գյուղատնտեսության 63 աշխատողներ և կուլտուրայի, դիտության ու արվեստի 35 աշխատողներ:

Վճռողական ձայնի իրավունք ունեցող 1·569 դելեգատներից 76-ն աշխատում են կենտրոնական կազմակերպություններում, 501—մարզային, յերկրամասային և հանրապետական կազմակերպություններում, 156—քաղաքային կազմակերպություններում, 279—շրջանային կազմակերպություններում, 256—արդյունաբերության և տրանսպորտի ձեռնարկություններում, 58 — կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում, 57—ուսումնական հաստատություններում:

Ընկերնե՛ր, առանձնապես պետք է կանգ առնել այն դրական փաստի վրա, որ դելեգատների դրալի մասը բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեն:

Այդ են ասում հետևյալ տվյալները դելեգատների կազմի մասին՝ ըստ կրթության.

	Դելեգատների թիվը բացարձակ տվյալներով	%%-ով ընդ. նկատմամբ
Բարձրագույն կրթությամբ	418	26,5
Այդ թվում՝		
Տեխնիկական	203	12,3
Թերի բարձրագույն	78	5,0
Միջնակարգ	352	22,5
Թերի միջնակարգ և տարրական	721	46,0

Այս տվյալներից յերևում է, վոր դելեգատների ընդհանուր կազմի 54%-ը բարձրագույն, թերի բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեն:

Համագումարում ներկա յեն բարձրագույն կրթություն ունեցող 418 դելեգատ կամ վճռողական ձայնի իրավունք ունեցող դելեգատների ընդհանուր քանակի 26,5%-ը, մինչդեռ կուսակցության XVII համագումարում բարձրագույն կրթություն ունեցող դելեգատները կազմում եյին միայն մոտ 10%-ը: Բարձրագույն կրթություն ունեցող դելեգատներ առանձնապես շատ կան հետևյալ դելեգացիաների կազմում.—Մոսկվայի—61 մարդ, Լենինգրադի—59, Ռոստովի—14, Խարկովի—13, Դնեպրոպետրովսկի—12, Գորկու—11, Կիևի—8, վրացական—9:

Բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող դելեգատների զգալի քանակի առկայությունն արտացոլում է մեր կուսակցության անդամների կուլտուրայի մակարդակի հսկայական աճը: Իրոք, Ստալինյան վերջին յերկու հնգամյակների ընթացքում բարձրագույն կրթություն ունեցող կոմունիստների ընդհանուր թիվը 9 հազարից ավելացավ հասավ մինչև 127 հազարի և միջնակարգ կրթություն ունեցողներինը—110 հազարից՝ մինչև 335 հազարի:

Դելեգատների մեջ մենք ունենք շատ ընկերներ, վորոնք առաջ են քաշվել դեկավար աշխատանքի կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում: Կուսակցության XVIII համագումարի դելեգատների կազմում ընդամենը կան 618 ընկերներ, վորոնք XVII համագումարից հետո տարին աշխատանքից առաջ են քաշվել դեկավար կուսակցական, տնտեսական, խորհրդային աշխատանքի:

Այն տվյալները, վոր դելեգատների մեջ մեծ թիվ են կազմում կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում տարին աշխատանքից ավելի խոշոր աշխատանքի առաջ քաշվածները, արտացոլում են նոր կադրերի առաջքաշման ընդհանուր պրոցեսը:

Ընկեր Ստալինի դեկուցումից մենք արդեն տեսանք, վոր հաշվետու ժամանակաշրջանում կուսակցությունն առաջ է քաշել ավելի քան 500 հազար նոր ընկերների: Այդպիսի առաջքաշումը կատարվել է նոր ստեղծված մարզերի, շրջանների, ժողկոմատների, ձեռնարկությունների, մեքենատրակտորային կայանների, խորհտնտեսությունների դեկավար կադրերի պահանջի հնգամյա ամման կապակցությամբ և կուսակցական, խորհրդային ու տնտեսական որդաններում աշխատանքն ամրացնելու համար:

Համագումարի դելեգատների կազմի վերաբերյալ տվյալները, ընդամենը, ցույց են տալիս, վոր նոր կադրերի համարձակ առաջքաշման հետ միասին կուսակցությունը լիակատար չափով ոգտագործում է դեկավար աշխատանքում հին կադրերին, վորոնք դեկավարման ու կուսակցության գլխավոր գծի համար, սոցիալիզմի կառուցման համար պայքարի նշանակելի փորձ են կուտակել: Դա յերևում է թեկուզ և այն բանից, վոր կուսակցության հին անդամների տեսակարար կշիռը համագումարի դելեգատների կազմում ավելի մեծ է կուսակցության ընդհանուր կազմում ունեցած նրանց տեսակարար կշռից:

Կուսակցական տարին		Կուսակցության համագումարի դելեգատների համեմատությամբ՝ տոկոսներով	Համ(ր)կ բոլոր անդամների համեմատությամբ՝ տոկոսներով
Մինչ	1917 թ.	2,4	0,3
	1917 թ.	2,6	1,0
	1918 թ.	3,1	1,6
	1919 թ.	6,7	2,7
	1920 թ.	4,6	2,7

Ինչպես տեսնում ենք, համագումարի դելեգատների կազմում ընդհատակի և քաղաքացիական պատերազմի մարտական դպրոցն անցած՝ կուսակցության հին կադրերի տե-

սակարար կշիռն զգալիորեն ավելի մեծ է՝ Համկ(բ)կ-ի բոլոր անդամների մեջ համապատասխան կուսակցական ստաժ ունեցող՝ կուսակցության անդամների տեսակարար կշռից: Եթե մինչև 1920 թ. ստաժ ունեցող կուս-անդամները կուսակցության բոլոր անդամների մեջ կազմում են 8,3%-ը, ապա համագումարի դելեգատների կազմի մեջ նրանց տոկոսը հասնում է 19,4-ի:

Այդ տեսակետից վոչ պակաս ցուցանշական են հանդիսանում համեմատական տվյալները 1929 թվականից և ավելի ուշ ստաժ ունեցող կուս-անդամների մասին: Կուսակցության կազմում 1929 թվականից և ավելի ուշ ժամանակվա ստաժ ունեցող՝ Համկ(բ)կ-ի անդամներ մենք ունենք 70%, մինչդեռ դելեգատների կազմում նույն այդ կուսակցական ստաժով մենք ունենք 43%:

Համագումարի դելեգատների կազմն ըստ տարիքի բնութագրվում է հետևյալ տվյալներով.—համագումարի կազմի՝ վճռողական ձայնի իրավունք ունեցող դելեգատների կեսը (49,5%) ունի 35-ից վոչ բարձր տարիք: Ապա այնուհետև՝ դելեգատների 32%-ը 36-ից մինչև 40 տարեկան են: 40-ից մինչև 50 տարեկաններ — 245 դելեգատ կամ 15,5%-ը, և 50 տարեկանից բարձր—48 դելեգատ—3%-ը:

Ընկերնե՛ր, համագումարի դելեգատների կազմը միաժամանակ արտացոլում է յերիտասարդ կադրերի նշանակելի առաջքաշման և հին կադրերի փորձի ճիշտ ուտիլիզացիայի արդյունքները: Ցավ այդ բնական է, վորովհետև կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում Կենտրոնական Կոմիտեն մեր ամբողջ աշխատանքում անշեղորեն անց է կացրել հին և յերիտասարդ կադրերին զուգորդելու, միացնելու ստալինյան դիծը: (Ծափահարություններ):

Կարելի յե ասել, վոր ինքը համագումարի դելեգատների կազմը հանդիսանում է հին և յերիտասարդ կադրերի այդ միացման, զուգորդման ամենապայծառ ցուցադրումը: Մենք բոլորս լսեցինք, ընկերներ, թե ինչպիսի բացառիկ նշանակություն և տալիս ընկեր Ստալինը հին և յերիտասարդ աշխատողների այդ զուգորդմանը, միացմանը կադրերի ընտրության բնագավառում, կուսակցական ղեկավարման ամրապնդման գործում:

Մեզ բոլորիս անհրաժեշտ է հետագայում ևս ավելի խստորեն ղեկավարվել ընկեր Ստալինի՝ հին և նոր կադրերի զուգորդման, միացման վերաբերյալ այդ կարևորագույն դիրեկտիվով:

Միքանի խոսք համագումարի դելեգատների ազգային կազմի մասին:

Համագումարի աշխատանքներին մասնակցում են դելեգատներ 35 ազգություններից: Համագումարում ներկա յեն ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, ադրբեջանցիներ, վրացիներ, հայեր, զազախներ, ուզբեկներ, թուրքմեններ, կիրգիզներ, տաջիկներ, թաթարներ, բաշկիրներ, հրեաներ, չուվաշներ, կալմիկներ, մորդվացիներ, մարիներ և այլն:

Այս փաստն ակնառու կերպով ցույց է տալիս, վոր համագումարի իսկ կազմով կրկին ու կրկին անգամ ընդգծվում է մեր հայրենիքի ժողովուրդների ամուր, անխախտելի բարեկամությունը: (Ծափահարություններ):

Առանձնապես պետք է կանգ առնել կուսակցության համագումարի աշխատանքներին մասնակցող կին-դելեգատների քանակի հարցի վրա: Համագումարի դելեգատների կազմում կա վճռողական ձայնի իրավունք ունեցող ընդամենը 143 կին, կամ 9,1 տոկոսը համագումարի դելեգատների ամբողջ կազմի համեմատությամբ: Կուսակցության XVII համագումարում կար 89 կին, կամ 7,2%-ը համագումարի կազմի համեմատությամբ:

Պետք է ասել, վոր միքանի կուսակցական կազմակերպություններ կկարողանային ավելի մեծ թվով կին ընտրել համագումարի դելեգատ, յեթե նրանք ավելի վճռականորեն մոտենային ղեկավար կուսակցական, խորհրդային և տնտեսական աշխատանքի համար կանանց առաջ քաշելու հարցին:

Իսկապես, վերցրեք այնպիսի կազմակերպություն, ինչպես Կալինինի մարզի կազմակերպությունը: Կալինինի մարզի կուսակցական կազմակերպության կազմում կա մոտավորապես 7·000 կին, վորը կազմում է մարզային կուսակցական կազմակերպության ընդհանուր կազմի 20 տոկոսը:

Մինչդեռ Կալինինի դելեգացիայի կազմում կա միայն 4 կին, կամ դելեգատների ամբողջ կազմի 11 տոկոսը:

Կամ առա Պերմի դելեգացիան, որի կազմում չկա վոչ մի կին: Կույբիշեվի և Ոմսկի դելեգացիաներն իրենց կազմում նույնպես վոչ մի կին չունեն: Կարելի յեր թվել ելի մի ամբողջ շարք այդպիսի դելեգացիաներ:

Ի տարբերություն այդ դելեգացիաների, աղբրեջանական դելեգացիան իր կազմում ունի 7 կին, ըստ որում նրանցից 4 ընկերներ Բաքու քաղաքի կուսակցական ռայկոմների քարտուղարներ են: (Ծափահարություններ):

Համագումարի կին-դելեգատների մեջ մենք ունենք ՀԸԿՄի 32 քարտուղարներ, ձեռնարկությունների 5 դիրեկտորներ, տեղական կուսակցական կազմակերպությունների 14 քարտուղարներ: Կին-դելեգատների կազմում կան բժշկուհիներ, ուսուցչուհիներ, դեկավար խորհրդային և տնտեսական աշխատողներ:

Համագումարի կին-դելեգատներից 21 ընկերներ պարգևատրված են Լենինի շքանշանով և միութենական այլ շքանշաններով: (Ծափահարություններ):

Կին-դելեգատների մեջ է Մոսկվա—Հեռավոր Արևելք կատարած իր խիզախ թռիչքով հայտնի Խորհրդային Միության հերոս ընկ. Ոսիպենկոն: (Ծափահարություններ):

Միքանի խոսք խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող դելեգատների մասին: Նրանց թիվը համագումարում, ինչպես յես ասացի, ընդամենը 466 մարդ է: Բարձրագույն կրթություն ունեցողները նրանց մեջ կազմում են 25%, թերի բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողները 27%:

Ըստ կուսակցական ստաժի՝ մինչև 1920 թ.—20,6%, 1921 թվից մինչև 1923 թիվը—3,5%, 1924 թվից մինչև 1929 թ.—45,3%, 1930 թվից և ուշ—30,6%:

Համագումարի՝ խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող դելեգատների մեջ կանանց թիվը 42 է:

Կուսակցության XVIII համագումարի կազմի բնութագրման համար անհրաժեշտ եմ համարում նշել նաև հետևյալը:

Համագումարի դելեգատների մեջ կան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների 606 դեպուտատներ, կամ դելեգատների ընդհանուր թվի 31%-ը:

Դելեգատների կազմում մենք ունենք 484 շքանշանակիրներ՝ դելեգատների ընդհանուր կազմի 25 տոկոսը, այդ թվում յերկու շքանշաններով պարգևատրվածներ—74, յերեքով—26, չորս և ավելի շքանշաններով—9:

Համագումարի դելեգատների մեջ են Ստախանովը, Կրիվոնոսը, Ոգնեվը, Անդելինան, Գուդովը և ստախանովյան շարժման շատ այլ փառապանծ նախաձեռնողներ: (Ծափահարություններ):

Դելեգատների մեջ մենք ունենք Խորհրդային Միության 23 հերոսներ, վորոնք մեր հայրենիքը փառաբանեցին դեպի Հյուսիսային բևեռ կատարած նշանավոր ռեյսով, դրեյֆող սառցադաշտի վրա կատարած առասպելական ձմեռումով, Մոսկվա—Վլադիվոստոկ պատմական ռեյսով, ինչպես նաև հերոսներ, վորոնք Խասան լճի մոտ տեղի ունեցած մարտերում հուշակեցին անպարտելի Կարմիր բանակի ուժն ու զորեղությունը և մեր հայրենիքի հզորությունը: (Ծափահարություններ):

Բոլոր տվյալները համագումարի դելեգատների կազմի վերաբերյալ, վորոնց մասին յես զեկուցում եմ ձեզ, նույնպես և տեղերից Կենտրոնական Կոմիտեում ստացված տեղեկությունները այն մասին, թե ինչպիսի խանդավառությամբ են անցկացվել կուսակցական կոնֆերենցիաները և կուսակցության XVIII համագումարի դելեգատների ընտրությունները, վկայում են այն մասին, վոր XVII համագումարից հետո անցած ժամանակաշրջանում մեր կուսակցությունն ե՛լ ավելի յե ամրապնդվել:

Կուսակցական կազմակերպությունները համագումարի դելեգատ են ընտրել նրանց, ովքեր ամենից ավելի ակտիվ են պայքարել կուսակցության գլխավոր գծի համար: (Ծափահարություններ):

Կուսակցության համագումարը հանդիսանում է մեր ամբողջ կուսակցության անխախտելի միասնականության և միաձուլության մարմնավորումը, կենտկոմի և ընկեր

Ստալինի շուրջը կուսակցության համախմբվածության մարմնավորումը: (Ծափահարություններ):

Ընկերներ, Մանդատային հանձնաժողովը գեկուցում է կուսակցության XVIII համագումարին, վոր Մոսկվայի, Լենինգրադի մարզային կուսակցական կոնֆերենցիաներում, Ուկրաինական, Ուզբեկական, Ղազախական և Բելոռուսական հանրապետությունների մարզային կուսակցական կոնֆերենցիաներում, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Տաջիկստանի, Կիրգիզիայի ազգային կոմկուսակցությունների համագումարներում, Թաթարիայի, Բաշկիրիայի կոնֆերենցիաներում, Ռոստովի, Իվանովոյի, Գորկու, Վորոնեժի, Կույբիշևի, Կրասնոդարի, Ստալինգրադի, Խարարովսկու, Պրիմորյեյի, Նովոսիբիրսկի, Սարատովի, Որյոլի, Սվերդլովսկի և այլ մարզային ու յերկրամասային կուսակցական կոնֆերենցիաներում միաձայն գաղտնի քվեարկությամբ կուսակցության XVIII համագումարի դելեգատ է ընտրվել ընկեր Ստալինը: (Բոլորը վոտքի յեն կանգնում, բուռն ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի, բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա», ընդհանուր «ուռա»):

Ընկերներ, մեր կուսակցությունը, մեծ Ստալինի ղեկավարությամբ, համախմբված և միասնական, յեկավ XVIII համագումարին: .

Կեցցե՛ կոմունիզմի մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Բոլորը վոտքի յեն կանգնում, յերկարատև ծափահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի, բացականչություններ՝ «Մեր ղեկակալ ընկեր Ստալինին ուռա՛», «Կեցցե՛ ընկեր Ստալինը», ընդհանուր «ուռա՛»):

ՀՀ Ազգային գրադարան
NL0987307

ԳԻՆԸ 15 Կ.

II
28681

Г. МАЛЕНКОВ

ДОКЛАД МАНДАТНОЙ КОМИССИИ XVIII СЪЕЗДА ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939